

—ԳԻՍԱԿ—

ԱՐԵՒ ՈՎԱՐԵՒ



891.995.
գ-59

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1936





ԱՄԲԵՆ

ՈՒ

ՌԱՄԲԵՆ

(Հնդկական գրույց)

ի մեծ տուն — մեջն ապրում եր խորա-
մանկ կատուն:

ի մեծ տուն — տան մեջքազմաթիվ մկներ:
կատուն փորսում եր մկներին, անուշ
անում և ազատ կյանք քաշում:

Ժամանակ անցավ... կատուն ծերացավ, ել առաջվա-
ռոյթը չուներ, գժվար եր նրա համար մկներ փորսալը:
Մտածեց, մտածեց ու վերջը հնարը գտավ:
Փողովից բոլոր մկներին ու ասաց.

— Լսեցեք, մուկիկներ, յես եմ կանչել ձեզ: Ուզում եմ
ընությունս փոխել Վորոշել եմ այլս ձեռք չտալ ձեզ:
Աղատ, անհոգ վաղվացեցեր, մի վախենաք ինձանից. ինձա-
նից ձեզ ել վտանգ չկա: Բայց մի պահանջ եմ դնում ձեր
առաջ. ամեն որ, որը յերկու անգամ իրար հետեւից իմ
առաջնորդ պետք ե անցնեք, մեկ-մեկ զլուխ տաք և հեռա-
նաք: Յես ձեզ ձեռք չեմ տա:

Մկները փոր լսեցին, թե կատուն իրենց ձեռք չի տա-
լու, ուրախությունից վեր-վեր թռան, և ել ինչ խոսք,
բոլորն ել պայմանին հավան կացան:

Յեվ այսպես, կատուն նստեց անկյունում, իսկ մկները
մեկ-մեկու յետեւից սկսեցին անցնել նրա առաջով:

Անցնում են և զլուխ տալիս: Իսկ կատուն հանգիստ
դիրք եր ընդունել: Հենց փոր վերջին մկնիկը մոտեցավ,
կանգ առավ և զլուխ տվեց, մեր կատուն՝ հափ — վրա
ընկավ և բռնելին ու ուտելը մեկ յեղավ:

Մյուս մկներն արգեն առաջ եյին անցել և փոչինչ
չնկատեցին:

Յեվ այսպես՝ որը յերկու անգամ, կատուն հանգիստ



որական յերկու մուկ եր անում ու շատ զոհ եր իր վիճակից:

Յերկու մտերիմ՝ Ամբեն ու Ռամբեն նկատեցին, վոր քանի գնում, այնքան իրենց ընկերների թիվը պակասում է: Մի լավ միտք արին ու վորոշեցին կատվին հետեւ:

Ամեն անդամ, հենց վոր մկների յերթն սկսվում եր, իրենց վորոշման համաձայն, Ամբեն քայլում եր առաջից, իսկ Ռամբեն՝ ամենից վերջը:

Անցավ Ամբեն, խորը գլուխ տվեց կատվին և ձայն տվեց ընկերոջը:

— Յեղբայր Ռամբե, վորտեղ ես:

— Այստեղ եմ, այստեղ, յեղբայր Ամբե, — պատասխանեց Ռամբեն մյուս ծայրից:

Ու այսպես նրանք շարունակ միմյանց ձայն եյին տալիս, մինչև վոր բոլոր մկները կատվի մոտից հեռանում եյին:

Չարանում եր կատուն, բայց հենց վոր Ամբեյի ձայնը լուսում եր, չեր համարձակվում ձեռք տալ Ռամբեյին:

Չարանում եր, բայց ճարն ինչ, քաղցած վորով պառկում եր քնելու:

Հետեւ յալ որը նույն բանը կրկնվեց. Ամբեն կանգնում եր, Ռամբեն պատասխանում: Դարձյալ կատուն վախենում եր դիպչել Ռամբեյին ու դարձյալ պառկում եր քաղցած վորով: Յերբորդ որը մկները ինչպես միշտ, անցնում եյին կատվի առջևով: Ամբեն կանչեց բարձրածայն.

— Յեղբայր Ռամբե, յեղբայր Ռամբե, վորտեղ ես:

— Այստեղ եմ, յեղբայր Ամբե, այստեղ եմ, — ձայնակցեց Ռամբեն, իսկ ինքն աչքի տակով նայեց կատվին, վոր չլինի թե հանկարծ հարձակվի:

Համբերությունից դուրս յեկավ կատուն, թռավ մկան վրա, բայց Ռամբեյի հետքն անդամ չեր մնացել:

Մնացած բոլոր մկներն ել փախան այս ու այն կողմ. տեսան, վոր գործ ունեն խաբերու կատվի հետ, վոր նրանից վտանգն անպակաս է:

Ու այն որվանից մկներն այլևս կատվի առաջով չեյին անցնում յերբեք:



ՈՎ ՈՒՄԻՑ ՎԱԽԵՑԱՎ

(Ընտափան հեղինակ)

— Կ ըմիթում ամենենին ջուր չկա, — ասոց տատիկը,
— գնամ առուն, ջուր բերեմ:

Դույլերն ուսափայտով վերցրեց ու գնաց:

Նայեց թոռնիկը, նրա սիրան ել ջուր ուզեց. վերցրեց ավելի վոքք դույլեր, հազըրեց ուսափայտի ծայրերին ու գնաց: Նայեց աքլորիկը, նա ել ուզեց իր համար ջուր բերեր. Վերցրեց ել ավելի վոքք դույլեր, հազըրեց ուսա-

Վայտի ծայրերին ու վազեց տատիկի ու թռոնիկի յետեից:
Մուկիկն իր ծակից գուրս նայեց: Նա ել ուզեց իր համար ջուր ընթել, վերցրեց ամենափոքր դույլերը – մատնոցի չափ, – հագցրեց ուսափայտի ծայրերին ու վաղ տպեց:

Ջրով լիքը դույլերով տուն եյին դառնում:

Սոջեից գնում եր տատիկը, նրա յետեից թռոնիկը,
ապա աքլորիկը, իսկ բոլորից վերջը հանդիսավոր կերպով
քայլում եր մուկիկը:


Ճանապարհի վրա, հասած խնձորենու տակ պառկել –
քնել, եր մոխրագույն նապաստակը: Գիշերը դաշտում յերկար
այս կողմ, այն կողմ վազվելուց հոգնել եր և հիմա հանգըստանում եր:

Քամին որորում եր խնձորենու ձղները, վորոնք ճանրաբեռնված եյին հյութեղ, խոշոր խնձորներով:

Հանկարծ մի խնձոր պոկվեց ու թրլլմփ – ուղիղ նապաստակի ճակատին: Նապաստակը սրտաճաք յեղած՝ քնից
վեր թռափ և փաթաթվեց ուղղակի տատիկի վոտներին:

Վախեցավ տատիկը, վայր ընկավ, ջուրը թափեց: Հետո
վեր թռափ, վազեց ու թագնվեց:

Նապաստակն սկսեց վազել և արշավեց ուղղակի թռո-



Նիկի վրա: Թոռնիկն ընկավ, ջուրը թափվեց, հետո վեր
ցատկեց, վագեց ու թագնվեց:

Ավելի շատ վախեցավ նապաստակը և յերկյուղից այլնո
վոչինչ չտեսնելով, թուավ ուղղակի աքլորիկի վրա:

Աքլորիկը բարձր ծղրտաց, վայր գցեց դույլերը: Հետո
վագեց ու թագնվեց:

Մուկիկը հենց վոր նկատեց փախչող նապաստակին,
վայր նետեց իր փոքրիկ դույլերը, փախավ — մտավ իր
բունը:

Նստել եր տատիկն ու մտածում եր.

— Լավ ազատվեցի արջի ձեռքից:

Նստել եր թոռնիկն ու մտածում եր.

— Ինչ լավ ազատվեցի գայլի ձեռքից:

Աքլորիկը նստած մտածում եր.

— Ինչ բախտ եր, վոր կարողացա ազատվել կատաղի
ազվեսից:

Մուկիկը բնում նստած մտածում եր.

— Ո՞յ թե լավ փախա գազան կատվի ձեռքից:

Իսկ նապաստակը, իր բոլոր ույժերը լարած, առանց
յետ նայելու՝ դեռ շարունակում եր վագել, վագել անտառ
ու թագնվեց տերեների կույտի մեջ:



Խեղճը հազիվ եր շունչը յետ բերում: Յերկար ժամանակ չեր կարողանում ուշքի գար
Վերջապես շունչը յետ բերեց, ուշքի յեկավ, մտածեց.
— Համա ահ կերա, հա... Վճնց եյին յետեիցս ընկեր
քիչ մնաց բռնեյին, բայց ինձ աղիկ կասեն, փախա ու
ազատվեցի:

[REDACTED]
Տես. Խմբագիր՝ Ս. Գևառպարյան
Նկարիչ՝ Նելի Լի
Մրագրիչ՝ Ս. Շամբագյան

ՀՀ Ազգային գրադարան



NL0395843



Գրավիթի լիազոր Հ. Ա. 1102. Պատվեր 674. Հրամ. 3726. Տիրած 5000

Պետրակի սպառան, Յերևան, Ռ Գևորգի, № 4

605

7830

ԳԻՍԱԿ



ГИСАК
АМБЕ И РАМБЕ

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.